ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N Արտահերթ 3

14 օգոստոսի 2025 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 31 անդամներ:

Բացակա էին՝ Գևորգ Ղուկասյանը, Կարեն Սիմոնյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վարդան Ղուկասյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Մալխասյանը:

ԼՍԵՑԻՆ

1. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2029 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(ԶԵԿ. ՄԱԴԼԵՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղականինքնակառավարմանմասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 82-րդ հոդվածի 2-րդկետով՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է. 1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025-2029թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի: 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Գյումրի համայնքի ավագանու անդամների կողմից հնչեցին հարցեր և առաջարկություններ համայնքի հնգամյա զարգացման ծրագրի վերաբերյալ:

Ելույթ ունեցան Գյումրի համայնքի ավագանու անդամներ.

« Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն

Քնարիկ Հարությունյանն արեց մի քանի նկատառումներ և իր ելույթում նշեց, որ փողոցների հարցը քաղաքի զարգացման տեսանկյունից շատ կարևոր է, քանի որ ենթակառուցվածքների զարգացումն է ապահովում ընդհանուր քաղաքի զարգացումը: Նշեց, որ նախորդ իշխանությունների ժամանակ 37 փողոց է վերակառուցվել, իսկ 2018 թվականից սկսած՝ 143: Նկատեց, որ ծրագրում շեշտվել է նպաստառուների և գործազուրկների մասին ինֆորմացիա, բայց այդտեղ չկար հաշմանդամներին, տարեցներին, երեխաներին, երիտասարդներին վերաբերող նյութեր: Նաև հայտարարեց, որ իրենց խմբակցությունը դեմ է քվեարկելու հնգամյա զարգացման ծրագրին, քանի որ այն բավականին թույլ է:

Լևոն Անանյանն իր ելույթում նշեց,որ ծրագիրը բնավ այն փուլում չէ, որը կցանկանային, որ մեր քաղաքը լիներ 5 տարուց: Այսինքն չկային կոնկրետ նշված կետեր,թե կատարելով այս ծրագիրը ապագայում ունենալու ենք ավելի լավ Գյումրի: Նկատեց, որ ծրագրում չկային հստակ ներդրումային միջավայրի բարելավման հետ կապված կետեր, չկային նոր մոտեցումներ, լուծումներ տուրիզմի ոլորտի զարգացման համար: Խոսեց նաև մենեջմենթից, օրինակ սպորտդպրոցները կարող են իրականացնեն ինչ-որ վճարովի ծառայություններ, տրամադրեն մարզադաշտեր, կամ սիրողական մրցույթներ կազմակերպեն:

«Մեր Քաղաքը» խմբակցություն

Լիզա Գասպարյանն իր ելոիյթում նշեց, որ Գյումրիում պետք է իրականանան այն ծրագրերը, որոնք կծառայեն ի շահ քաղաքի, իրենք կողմ ենք այդ ծրագրերին, սակայն դեմ են կիսատ ծրագրերին, կամ այն ծրագրերին, որոնք չկային, բայց պետք է լինեին: Տուրիզմի վերաբերյալ, որևէ ծրագիր չկար: Խոսվեց նաև քաղաքային շուկայի մասին: Անդրադարձավ այն հարցին, որ Գյումրիում միայն մի այգի չկա՝ Բարեկամության այգին էր միայն ընդգրկված, կան բազում այլ այգիներ ևս, քանզի կանաչ տարածքները օդի նման պետք են մեր քաղաքին: Նշեց, որ իրենք 5 առաջարկություն էինք արել, որից երկուսը՝ ընդգրկվել էր: Առանձնացրեց Արցախ թաղամասի սպորտկոմպլեքսի հարցը, որը նույնպես մերժվել է: Խոսեց՝ Անի, Մուշ, Բուրվարային թաղամասերից, բայց Սևերսկին էլ է ծայրամասային թաղամաս, Վարդբաղը, Կոմբինատը, Ստրոմմաշը և այլ թաղամասեր, որոնք պարբերաբար բոլորիս ուշադրությունից դուրս են մնում: Այդ թաղամասերում անգամ խաղահրապարակներ չկան մեր մանուկների համար: Նշեց, որ այս խնդրով զբաղվում է նաև Ազգային Ժողովի պատգամավոր Մարտուն Գրիգորյանը: Լիզա Գասպարյանը հայտարարեց, որ խմբակցությունը դեմ կքվեարկի հնգամյա զարգացման ծրագրին՝ այն լավացնելու, բարելավելու նպատակով:

« Իմ Հզոր Համայնք» խմբակցություն

Ռուբեն Մխիթարյան. փաստ է, որ հնգամյա զարգացման ծրագրում կոնկրետ ռազմավարություն չկա, թե ինչ տեսակի տուրիստական քաղաք ենք մենք պատկերացնում, չկա հստակ ճանապարհային քարտեզ, չկան վիճակագրական տվյալներ: Բոլորին հասանելի պիտի լինի քաղաքի նկարագիրը:

Նիստը վարողի կողմից հարցը հանվեց օրակարգից՝ ավագանու անդամների կողմից գրավոր ներկայացված առաջարկությունները ծրագրում ներառելու և նախագիծը լրամշակելու նպատակով:

<u>ԼՍԵՑԻՆ</u>

2. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ ծրագիր), հաշվի առնելով ծրագրի վերաբերյալ հանրային բաց լսումների արդյունքները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1.Հաստատել ծրագիրը՝ համաձայն N 1-4 հավելվածների:

2. Ընդունել ի գիտություն,որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ծախսերը հստակ արտացոլում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի զարգացման առաջնահերթություններն ու գերակայություններն՝ ըստ գործառնական ոլորտների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026թվականի հունվարի 01-ից:

Նիստը վարողի կողմից այս հարցը նույնպես հանվեց օրակարգից և չդրվեց քվեարկության:

ԼՍԵՑԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի N 31-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերի դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2025թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 31-Ն որոշման մեջ կատարել փոփոխությունը.

1) 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN 1,2,3,4,5,6 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 60-Ն)*

ԼՍԵՑԻՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ

ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով՝**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի** ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկին (այսուհետ՝ Հիմնարկ) անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել ԳԱԶ 3102 մակնիշի 109LL70 պետհամարանիշով ծառայողական ավտոմեքենան:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ օրենքով սահմանված կարգով կատարել Հիմնարկի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հաշվապահական ձևակերպումները:
3.Անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվող գույքի հանձնաման-ընդունման հետ կապված գործընթացի կազմակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին :
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 61-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

5. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՐՄՆԱՄԱՐԶԱԿԱՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Նկատի ունենալով որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքը գտնվում է կապիտալ վերակառուցման ընթացքում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն)

տնօրենի գրությունը՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված՝ 2025 թվականի օգոստոսի 08-ին N 112732 թվագրությամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Կազմակերպությանը ժամանակավոր անհատույց օգտագործման տրամադրել այաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Թամանյան փողոց N7/1 հասցեի Լ. Իշտոյանի անվան ֆուտբոլի դպրոցի շենքը (սեփականության վկայական N 15072022-08-0081)՝ մինչև կազմակերպության շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ավարտը:

2. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 810 700 (ութ հարյուր տաս հազար յոթ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ մարզադահլիճի ընթացիք վերանորոգման համար շինարարական նյութերի ձեռքբերման նպատակով:

3.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-30 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 62-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՎՈՎ 24 ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող թվով 24 ավտոմեքենաների մեծ մասը գտնվում է անսարք վիճակում, իսկ մնացածի հաճախակի խափանումների հետևանքով կատարվող կրկնակի վերանորոգումների արդյունքում մեքենաների հետագա շահագործումը ծախսատար է համայնքի համար, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով 2025 թվականի օգոստոսի 06-ի «Գյումրու կոմունալ ծառայություն» համայնքային բյուջետային հիմնարկի տնօրեն Արտյոմ Մկրտչյանի թիվ 25/001-08 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի պարտականությունները կատարող Անդրանիկ Չադրյանի թիվ Զ-1103-2025

զեկուցագրերը և Գյումրի համայնքի ղեկավարի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող թվով 24 տրանսպորտային միջոցները օտարել աճուրդային եղանակով:
2.Սահմանել սույն որոշման 1-ին կետում նշված տրանսպորտային միջոցների մեկնարկային գները՝ հիմք ընդունելով «Ջի Կոնսալտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքին պատկանող թվով 24 (քսանչորս) տրանսպորտային միջոցների շուկայական արժեքների գնահատման 29.07.2025թ թիվ V038-2025-V048-2025 և V050-2025-V62-2025 հաշվետվությունները՝ համաձայն հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 63-Ա)*

ԼՍԵՑԻՆ

7. ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 100 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով սոցիալապես անապահով թվով 100(հարյուր) քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Թվով 100 (հարյուր) անձանց որպես դրամական օգնություն հատկացնել 2 240 000 (երկու միլիոն երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 64-Ա)*

ԼՍԵՑԻՆ

8. ԶՈՒԲԵՅԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

2025թվականի հուլիսի 20-ին Երևան քաղաքում Զուբեյդա Հովհաննիսյանի որդին՝ Սամվել Էդգարի Սահակյանը մասնակցել է Ռոբոտների Համաշխարհային օլիմպիադիայի 2025 թվականի ազգային փուլին և վերադարձել է հաղթանակով: Սեպտեմբերի 2-ին Սլովենիայում կայանալիք Ռոբոտների համաշխարհային օլիմպիադիայի 2025թվականի բաց մրցաշարին Սամվել Էդգարի Սահակյանի մասնակցություն ապահովելու համար, Զուբեյդա Հովհաննիսյանին դրամական օգնություն տրամադրելու անհրաժեշտություն կա:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի բնակիչ Զուբեյդա Հովհաննիսյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված դիմումը՝ (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի հուլիսի 29-ին N 10608 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Զուբեյդա Հովհաննիսյանին որպես դրամական օգնություն հատկացնել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Ռոբոտների համաշխարհային օլիմպիադիայի 2025 թվականի բաց մրցաշարին Սամվել Էդգարի Սահակյանի մասնակցությունն ապահովելու համար:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զուբեյդա Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 65-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով

Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ՝ Անդրանիկ Կարապետյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 19-ին N6267 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային բաժանմունքին՝ որպես նվիրատվություն, հատկացնել 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ 2025 թվականին նախատեսված բազմաբնույթ գրական միջոցառումները կազմակերպելու և իրականացնելու համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անդրանիկ Կարապետյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 66-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

10. «ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ) Գյումրու գրասենյակի նախաձեռնությամբ Գյումրիում կայանալու է «ԵՐԳՈՂ ԱՐՑԱԽ» երգչախումբի համերգը: Համազգային հայ կրթական և մշակութային հիմնադրամի Գյումրու գրասենյակի տնօրեն՝ Արա Նախշքարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ երգչախմբի տեղափոխման և տրանսպորտային ծախսերը հոգալու համար դրամական աջակցություն տրամադրելու խնդրանքով: Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի** ավագանու 2017թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության և 10-րդ կետի դրույթներով հիմք ընդունելով Հիմնադրամի Գյումրու գրասենյակի պատասխանատու-տնօրեն Արա Նախշքարյանի գրությունը (Գյումրու համայնքաապետարանում մուտքագրված՝ 2025 թվականի օգոստոսի 06 -ին N 11137 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հիմնադրամին հատկացնել 100 000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ սեպտեմբերի 7-ին Գյումրիում կայանալիք «ԵՐԳՈՂ ԱՐՑԱԽ»

երգչախմբի տեղափոխման, տրանսպորտի ծախսերը հոգալու նպատակով:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հիմնադրամի Գյումրու գրասենյակի պատասխանատու-տնօրեն Արա Նախշքարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 67-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

11. «ԿԱՏԱԿՕՖՖ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ)

2025 սեպտեմբերի 6-ից 18-ը Փարիզում՝ կանցկացվի միջազգային «Ֆեստիվալ Դեպառտդ ինսենդիես» թատերական փառատոնը,որի պաշտոնական հրավերն ստացել է Կատակոֆֆ թատերախումբը: Թատերախմբի երկու անդամներն են՝ Գյումրու պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի Սեդա Մկրտչյանն է և նույն կառույցի երիտասարդ բեմադրիչ Տաթևիկ Հակոբյանը:
Թատերական փառատոնին Գյումրեցի երկու դերասանուհիների մասնակցությունն ապահովելու հանգամանքով պայմանավորված և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Նորոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերությամբ, 10-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով «Կատակօֆֆ» մշակութային հասարակական կազմակերպության (այսուհետ կազմակերպություն) նախագահ Գնուն Մարտիրոսյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղված դիմումները (համայնքապետարանում համապատասխանաբար մուտքագրված՝ 2025 թվականի օգոստոսի 06-ին և 07-ին NN 11102 և 11210 թվագրություններով)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 300 000 (երեք հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ միջազգային «Ֆեստիվալ Դեպառտդ ինսենդիես» թատերական փառատոնին Գյումրիի երիտասարդ դերասանների մասնակցության ապահովման համար:
2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-

գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպության նախագահին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 68-Ա)*

ԼՍԵՑԻՆ

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14–Ի N 170-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԻԼԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի դրույթներով՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է.
1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու օր տոնակատարության անցկացման ամիսը սահմանելու և Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 121–Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N170-Ա որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) որոշման մեջ 1-ին կետի 1-ին ենթակետի «հուլիս, օգոստոս» բառերը փոխարինել «ամռանը կամ աշնանը՝ ըստ նպատակահարմարության:» բառերով,
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-24 Դեմ-0 Ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 69-Ա)*

ԼՍԵՑԻՆ

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻՆ ՄՐՑԱՆԱԿԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ, ԼԻԼԻԹ ԹՈՎՄԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդմասով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N-119 Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ, 11-րդ և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետի 2025 թվականի օգոստոսի 7-ի զեկուցագիրն՝ ուղղված Գյումրի համայնքի ղեկավարին՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրի համայնքի ավագանինորոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ենթակայության արվեստի և երաժշտական դպրոցներում ուսուցում ստացող 2024 թվականին հանրապետական և միջազգային մրցույթներին մրցանակային տեղերի արժանացած աշակերտներին և նրանց ուսուցիչներին խրախուսման նպատակով հատկացնել 3250000 (երեք միլիոն երկու հարյուր հիսունհազար) Հայաստանի Հանրապետությանդրամ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին սույն որոշման1-ին կետում նշված գումարների հատկացումը կատարել Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/2/3գործառական (4727) «Կրթական մշակութային և սպորտային նպաստներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝օրենքով սահմանված կարգով:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կազմակերպությունների տնօրեններին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-29 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 70-Ա)*

ԼՍԵՑԻՆ

14. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻՑ ՄԱՍՀԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԱՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ» ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՈՒՂՂԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ և 25-րդ կետերով և Հայաստանի Հանրապետությանվարչապետի 2024 թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» N71-Ա որոշման 1-ին կետով հաստատված ժամանակացույցի 3-րդ կետի դրույթներով **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքիավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրիհամայնքի բնապահպանական հարկ վճարվող թվով 3 ընկերությունների կողմից վճարված բնապահպանական հարկից մասհանվող գումարներով«Գյումրի համայնքում ծառատնկման աշխատանքներ իրականացնելու նպատակով ծառերի ձեռքբերում» բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8792000 (ութ միլիոն յոթ հարյուրիննսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ,

2) ծրագրի իրականացման հետ առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանցից բխող գործառույթների կազմակերպումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 71-Ա)*

ԼՍԵՑԻՆ

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՊՌՈՇՅԱՆ ԵՎ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿՈՒՄ ԿԱՐՈ ՍԱՍՈՒՆՈՒ ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետովև ՀայաստանիՀանրապետությանկառավարության 31 օգոստոսի 1999 թվականիթիվ 551 որոշման 1–ին կետով հաստատված կարգի 2–րդ կետով և հիմք ընդունելովՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2022թվականի ապրիլի 13–ի գրությունը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 6766–2022 թվագրմամբ),Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ուղղված «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, Երևանի պետական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Ներսիսյանի և պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հրատարակիչ Կարո Սասունու ժառանգների՝ երջանկահիշատակ Բաբկեն Սասունու և Քրիստափոր Սասունու 2022 թվականի ապրիլի 8–ի առաջարկությունը և «Կումայրի» պատմամշակութային արգելոց–թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ թանգարան) տնօրեն Ի. Ավագյանի 2025 թվականի օգոստոսի 6–ի զեկուցագիրը (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 11118-2025համարով), ինչպես նաև թանգարանի մասնաճյուղ Քանդակագործության Ազգային պարկ–թանգարանի վարիչ Ա. Գևորգյանի 2023 թվականի նոյոմբերի 22–ին կազմակերպած քննարկման արդյունքները (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 25297 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**
1.ՏալիամաձայնությունՀայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Պռոշյան և Գարեգին Նժդեհի փողոցների խաչմերուկում պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հրատարակիչ Կարո Սասունու արձանի տեղադրման առաջարկությանը:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 72-Ա)*

ԼՍԵՑԻՆ

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ՓՈՂՈՑ 46/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻՑ № 31 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ԱՆՆԱ ՍԱՅԱԹԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ԱՐՄԱՆԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ԱՐՄԱՆԻ ՄԱԴՈՅԱՆԻՆ ԱՆԺԱՄԿԵՏ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ)

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացի՝ Աննա Սայաթի Մադոյանի Գյումրի համայնքի ղեկավարին հասցեագրված 2025 թվականի հուլիսի 29-ի № 10575-25 թվագրմամբ դիմումը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող (վկայական №18092020-08-0033) Մովսես Խորենացի փողոց թիվ 46/1 հասցեի բազմաբնակարան բնակելի շենքից № 31 սոցիալական բնակարանն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել քաղաքացիներ՝ Աննա Սայաթի Մադոյանին, Դավիթ Արմանի Մադոյանին, Գայանե Արմանի Մադոյանին :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Աննա Սայաթի Մադոյանին, Դավիթ Արմանի Մադոյանին, Գայանե Արմանի Մադոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-28 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 73-Ա)*

ԼՍԵՑԻՆ

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 33-րդ, 34-րդ, և 35-րդ կետերի պահանջները և որոշման հավելվածում նշված դիմումատուների Գյումրի համայանքի ղեկավարին ուղղված դիմումները՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված շենք-շինությունները և դրանց պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած հողամասերը ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ շինությունները կառուցողներին՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նախաբանում նշված դիմումատուներին պատշաճ կերպով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 74-Ա)*

ԼՍԵՑԻՆ

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի №656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզիԳյումրիհամայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի կողմից 2025 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների.

1) գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 413,58 (չորս հարյուր տասներեք ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,43 (ութսունութ ամբողջ քառասուներեք հարյուրերորդական) հեկտար, արոտ՝ 323,87 (երեք հարյուր քսաներեք ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) հեկտար,

2) բնակավայրի հողեր 2731,57(երկու հազար յոթ հարյուր երեսունմեկ ամբողջ հիսունյոթ հարյուրերորդական) հեկտար, որից բնակելի՝ 1140,32(մեկ հազար մեկ հարյուր քառասուն ամբողջ երեսուներկու հարյուրերորդական), տնամերձ՝ 367,64 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ վաթսունչորս հարյուրերորդական) հեկտար, հասարակական՝ 126,95(մեկ հարյուր քսանվեց ամբողջ ինսունհինգ հարյուրերորդական) հեկտար, խառը կառուցապատման՝ 34,47 (երեսունչորս ամբողջ քառասունյոթ հարյուրերորդական) հեկտար, ընդհանուր օգտագործման՝ 391,07 (երեք հարյուր իննսունմեկ ամբողջ յոթ հարյուրերորդական) հեկտար, այլ հողեր՝ 1038.76(մեկ հազար երեսունութ ամբողջ յոթանասունվեց հարյուրերորդական) հեկտար,

3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 367,15 (երեք հարյուր վաթսունյոթ ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) հեկտար,

4) էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,12 (չորս հարյուր քսաներեք ամբողջ տասներկու հարյուրերորդական) հեկտար,

5) հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 (իննսունչորս ամբողջ տասնմեկ հարյուրերորդական) հեկտար,

6) հատուկ նշանակության հողեր 236,41(երկու հարյուր երեսունվեց ամբողջ քառասունմեկ հարյուրերորդական) հեկտար,

7) անտառային հողեր 150,84 (մեկ հարյուր հիսուն ամբողջ ութսունչորս հարյուրերորդական) հեկտար,

8) ջրային հողեր 12,72 (տասներկու ամբողջ յոթանասուներկու հարյուրերորդական) հեկտար,

9) քաղաքացիների սեփականության հողեր 453,93 (չորս հարյուր հիսուներեք ամբողջ ինսուներեք հարյուրերորդական) հեկտար,

10) իրավաբանական անձանց հողեր 69,58 (վաթսունիննն ամբողջ հիսունութ հարյուրերորդական) հեկտար,

11) համայնքային սեփականության հողեր 3204,85 (երեք հազար երկու հարյուր չորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) հեկտար,

12) պետական սեփականության հողեր 687,59 (վեց հարյուր ութսունյոթ ամբողջ հիսունինը հարյուրերորդական) հեկտար,

13) վարչատարածք՝ 4429,50 (չորս հազար չորս հարյուր քսանիննն ամբողջ հինգ տասնորդական) հեկտար:

14) գյուղատնտեսական նշանակության ոռոգվող հողեր՝ 89,7 (ութսունինն ամբողջ յոթ տասնորդական) հեկտար, որից վարելահող՝ 88,4 (ութսունութ ամբողջ չորս տասնորդական) հեկտար,
15) բնակավայրի ոռոգվող հողեր 123,0 (մեկ հարյուր քսաներեք) հեկտար, որից տնամերձ՝ 123,0 (մեկ հարյուր քսաներեք) հեկտար, 16) անտառային ոռոգվող հողեր 15,1 (տասնհինգ ամբողջ մեկ տասնորդական) հեկտար, որից վարելահող՝ 15,1 (տասնհինգ ամբողջ մեկ տասնորդական) հեկտար
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-27 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 75-Ա)*

ԼՍԵՑԻՆ

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ռ. ԴԱՆԻԵԼՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 1779,48 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությունով, 25-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի օգոստոսի 29-ի N 01/11.1/13213-2024 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ռ. Դանիելյան փողոցի հարևանությամբ 1779,48 (մեկ հազար յոթ հարյուր յոթանասունինը ամբողջ քառասունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Սարիկ Մինասյանի առաջարկությամբ հեղինակի կողմից հարցը հանվեց օրակարգից:

ԼՍԵՑԻՆ

20.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄԱՆՈՒՇՅԱՆ ՓՈՂՈՑ 5/5 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ 68,71 ՔԱՌ.Մ. ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 5-րդ մասով,

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 4-րդ ենթակետի ա. պարբերությունով, 25-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի 2024 թվականի սեպտեմբերի 11-ի N 01/17/08219-2024 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց 5/5 հասցեին կից 68,71 (վաթսունութ ամբողջ յոթանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողեր գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի գլխավոր ճարտարապետին և Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնին՝ օրենքով սահմանված կարգով սույն որոշման 1-ին կետում նշված փոփոխությունը արտացոլել Գյումրի համայնքը (Գյումրի քաղաքը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Շիրակ-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթում և ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 76-Ա)*

ԼՍԵՑԻՆ

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 61/1 ՀԱՍՑԵԻ 244,35 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մ. Մկրտչյան փողոց N 61/1 հասցեի 244,35 (երկու հարյուր քառասունչորս ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն էլեկտրոնային կադաստրային քարտեզի, հանդիսանում է արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության հողամաս:

Նշված հողամասը վերագրանցելու նպատակով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի 9-րդ մասով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրի քաղաքի Մհեր Մկրտչյան փողոց N 61/1 հասցեի 244,35 (երկու հարյուր քառասունչորս ամբողջ երեսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծին, որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 77-Ա)*

ԼՍԵՑԻՆ

22. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՐԿՈՒ (Հ.ՇԻՐԱԶԻ) ՓՈՂՈՑ N 17 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ԿԻՍԱՆԿՈՒՂ) ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող, (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական 1997215) Գորկու (Հ.Շիրազի) փողոց N 17 հասցեի 37,62 (երեսունյոթ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով անշարժ գույքը (կիսանկուղ) մրցութով՝ 10 (տասը) տարի ժամկետով, տրամադրել վարձակալության՝ սպասարկման սրահ կազմակերպելու նպատակով:

2. Հիմք ընդունելով «Ա.Գ. Էսթեյթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սույն որոշման 1-ին կետում նշված գույքի շուկայական վարձավճարի արժեքի գնահատման վերաբերյալ հաշվետվությունը՝ մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել տարեկան՝ 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Կողմ-25 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 78-Ա)*

ԼՍԵՑԻՆ

23. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 138-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ ՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ սահմանելու մասին» N 138-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետի 2-րդ սյունակի «11» թիվը փոխարինել «10» թվով, 6-րդ սյունակի «290 000» թիվը փոխարինել «450 000» թվով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի 15-րդ կետի 2-րդ սյունակի «11» թիվը փոխարինել «10» թվով, 6-րդ սյունակի «290 000» թիվը փոխարինել «450 000» թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 79-Ա)*

ԼՍԵՑԻՆ

24.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 158-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԵՆՐԻԿ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝ ՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով շենք-շինություններ տրամադրելու մասին» N 158-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշմամբ հաստատված հավելվածի 23-րդ կետի 3-րդ սյունակի «898,27» թիվը փոխարինել «761,45» թվով, 5-րդ սյունակի «03032015-08-0003» թիվը փոխարինել «09122024-08-0033» թվով.

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 80-Ա)*

ԼՍԵՑԻՆ

25. ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՒՅՔ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱԼՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Եվրոպական Միության կողմից ֆինանսավորված «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ տեղական ինքնակառավարման» ծրագրի շրջանակներում ստացված գույքի վերաբաշխման գործընթացը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 08-ի թիվ 18 և 2025 թվականի մարտի 05-ի թիվ 44 որոշումները և հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավար Ա.Փելեշյանի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 06-ին 5707 թվագրմամբ)՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքից որպես նվիրաբերություն ընդունել գույք՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին՝ ապահովելՎանաձորի համայնքապետարանի հետ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագրի կնքումը և գույքի ընդունման գործընթացը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման

հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի բյուջեի միջոցների հաշվին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-26 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 81-Ա)*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Լ.Գ. ԱՆԱՆՅԱՆ
Շ. ԱՐԱՄՅԱՆ
Ք. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Վ. ԴԱՎԹՅԱՆ
Լ. ՆԱԶԱՐՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ն. ՄԻՐԶՈՅԱՆ

Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ

Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

Վ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Ս. ՄՈՍՈՅԱՆ

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ք. Գյումրի
2025թ. օգոստոսի 14